

ԴԻԱՆԱ ԱՂԱԲԵԿ ԱԲԳԱՐ

Կյանքը և գործունեությունը

«ՀԱՅ ԿՆՈՋ ՏԱՐՎԱ» ԱՌԻԹՈՎ

ՆՈՐ ԶՈՒՂԱ

2011

**Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՑ**

**ՀՐԱՄԱՆԱԲ
ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԱՐԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՍՈՒՅՆ ԳՐԶԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՄՍՈՒՄՆԵՐԻՆ
ՄԱՄՆԱԿՑԵԼ Է
Ն.Ջ. ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԳԹՈՒԹՅԱՆ
(ԿԱՐՄԻՐ ԽԱԶ) ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ուրախությամբ ողջունում են «Դիանա Աղաբեկ Աբգարի կյանքը և գործունեությունը» գրքի հրատարակությունը՝ թեմիս Կրոնական խորհրդի նախաձեռնությամբ, «Հայ կնոջ տարվա» առիթով: Ինչպես տեղյակ եք, Վեհափառ հայրապետը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսը, 2010 տարին հռչակել էր «Հայ կնոջ տարի» և այդ ծիրում Կրոնական խորհուրդը նախաձեռնել էր մեկ տարի առաջ Դիանա Աբգարին նվիրված մի գրքույկ հրատարակել և նվիրել «Հայ կնոջ տարվան»:

Սույն գրքում կգտնեք հայերեն նամակներ Դիանա Աբգարից, որոնք առհասարակ մաղթանքներ և շնորհակալագրեր են՝ ուղղված Ս. Էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոսին և կամ Գերագույն խորհրդին: Նամակների մեջ ակներև է, որ Դիանա Աբգարը կրոնասեր և հավատացյալ կին է և կարող՝ եկեղեցական արարողություններին, հոգևոր սնունդի և մանավանդ Ս. Պատարագի՝ Հաղորդության: Դիպուկ է իր արտահայտությունը, երբ ասում է՝ «Մնամ հավատարիմ դուստր՝ Հայաստանի Եկեղեցու», ինչպես նաև իր սույն բացատրությունը. «Աշխարհը դատարկ է և ունայնություն: Մնաց մեզ միայն հավատ, հույս, սեր»:

Նույն գրքում կարող եք գտնել նաև մտորումներ և վկայություններ Դիանա Աբգարի մասին, թե ինչպես Յոկոհամայում նա օգնել է հայ փախստականներին՝ նրանց Ամերիկա տեղափոխելու գործընթացին: Գաղթականների երեխաներին տեղավորում է Յոկոհամայի դպրոցներում սովորելու:

Վերջում անդրադարձ կա իր գրքերի, աշխատանքների և հոդվածների մասին, որոնք առհասարակ տպագրվել են անգլիական, ամերիկյան և ճապոնական թերթերում: Մակայն հատկապես իր 5 աշխատությունների համառոտ նկարագրությունները և դրանցից հատվածներ կգտնեք այնտեղ՝ առավել ծանոթանալու իր նկարագրին, մտածելակերպին ու աշխատանքին:

Դիանա Աղաբեկ Աբգարն առաջին կինն է եղել աշխարհում, որ դիվանագիտական բարձր պաշտոն է զբաղեցրել:

